

<p>Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)</p>	<p align="center">ԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (7.20ՖԶԷ001)</p>
<p>ECTS կրեդիտ</p>	<p>2 կրեդիտ</p>
<p>Դասընթացի պատասխանատու դասախոս</p>	<p>Բարսեղյան Մ.Գ, ֆ.մ.գ.դ., ասիստենտ</p>
<p>Ուսումնառության վերջնարդյունքներ</p>	<p>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p align="center"><i>(գիտելիք և իմացություն)</i></p> <ul style="list-style-type: none"> • բացահայտել տվյալ բնագավառում գիտության արդի վիճակը, • ձևակերպել տեղական և միջազգային չափանիշներին բավարարող գիտական հոդվածներ, <p align="center"><i>(կարողություններ)</i></p> <ul style="list-style-type: none"> • բացահայտել գիտության տվյալ բնագավառի արդի խնդիրները, • ձևակերպել և ընդհանրացնել ուսումնասիրման մեթոդները և ստացված արդյունքները, • ձևակերպել և ներկայացնել հրատարակման գիտական հոդված:
<p>Դասընթացի թեմատիկ ծրագիր</p>	<ul style="list-style-type: none"> • Ներածություն: Ինչ է գիտությունը և նրա նշանակությունը քաղաքակիրթ աշխարհում: Գիտության դասակարգումն ըստ ոլորտների: Գիտատեղեկատվական շտեմարաններ և հղման համակարգեր: Գիտաչափություն և գիտաչափական ցուցիչներ: • Ինչ է գիտական հոդվածը: Ինչպես գրել հոդվածի վերնագիրը (վերնագրի կարևորությունը և ընտրությունը): Ինչպես թվարկել հեղինակներին և հասցեները: Անունների հերթականությունը: Հեղինակների ընտրությունը: • Ինչպես գրել գիտական հոդվածի ամփոփագիր (սահմանում, ամփոփագրերի տեսակները, բառերի խնայողություն): Ինչպես գրել հոդվածի ներածություն

	<p>(ուղեցույցներ, ուղեցույցների հիմնավորումը, մեջբերումներ և հապավումներ):</p> <ul style="list-style-type: none"> • Ինչպես գրել գիտական հոդվածի նյութեր և մեթոդաբանություններ բաժինը (բաժնի նպատակը, նյութեր, մեթոդներ, վերնագրեր, չափումներ և վերլուծություններ, հղումների անհրաժեշտություն, աղյուսակներ և գծապատկերներ, ճիշտ ձև և քերականություն): • Ինչպես գրել ստացված արդյունքների մասին (արդյունքների բովանդակությունը, ինչպես աշխատել թվերի հետ, ձգտել հստակության, խուսափել ավելորդ բառերից, լրացուցիչ նյութերի առցանց համալրում): Ինչպես գրել քննարկումների մասին: • Ինչպես հղում տալ օգտագործված գրականությանը (կանոններ, էլեկտրոնային օգնություն, հղումների ոճեր, հղում էլեկտրոնային նյութերին): Ինչպես ընտրել գիտական պարբերականներ:
<p>Դասընթացի գրականության ցանկ</p>	<ul style="list-style-type: none"> • Barbara Gastel and Robert A. Day. How to Write and Publish a Scientific Paper. Eighth Edition. Santa Barbara, California: Greenwood, 2016, 352 pages, ISBN 978-1-4408-4280-1. • Borrego M., Douglas E.P., Amelink C.T. Quantitative, qualitative and mixed research methods in engineering education. Washington, D.C., Journal of Engineering Education, 2009, 98(1), 53–66. • Uwe Flick, An introduction to qualitative research. Fourth edition. London, SAGE publications Ltd, 2009, 528 pages, ISBN 978-1847873248.